



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլ 2011 թ.

թիվ 20-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի գյուղական վայրի հաշվային տեղամասի» ամփոփ տեղեկագիրը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
 Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 20-Ա որոշման

Ձև թիվ 6-գյուղական

Մարդահամարի տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի համարը
 	

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ

N------(կազմված է-----թերթերից)

Մարգ-----Տարածաշրջան-----

Գյուղական համայնք-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(լրացվում է հրահանգիչ- հսկիչի կողմից)

Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում բաց է թողնվել (մարդ)	Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվել է (մարդ)				
Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ		ժամանակավոր ներկաներ	բացակայողներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>

Ընդամենը կազմվել են (քանակը)

Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)-----

Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)-----

Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Բնակչությանը տրվել է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)-----

Ցուցումներ գյուղական վայրի հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 6-գյուղական**) լրացվում է հաշվարարի կողմից մարդահամարի ժամանակ և հետագայում օգտագործվում մարդահամարի նախնական արդյունքները ստանալու համար։

2. Ամփոփ տեղեկագրի աջ անկյունում առանձնացված վան-դակներում լրացվում է մարդահամարի և հրահանգչական տեղամասերի համարները, իսկ հասցեամասում հաշվային տեղամասի համարը։

Եթե հաշվային տեղամասի բոլոր տների (շինությունների), բնակարանների գրառման համար ամփոփ տեղեկագրի մեկ թերթը չի բավականացնում, ապա գրառումը շարունակվում է տեղեկագրի երկրորդ թերթի վրա։ Այդ դեպքում առաջին թերթի վրա՝ համարից հետո, գրվում է «ա» տառը, իսկ երկրորդում՝«բ» տառը (օրինակ՝ Յա, Յբ) և այլն։

Հասցեամասը լրացվում է ամփոփ տեղեկագրի յուրաքանչյուր թերթի վրա, իսկ թերթերի քանակը՝ միայն առաջինի վրա։

3. 1-ին պունակում լրացվում է համայնքի և բնակավայրի լրիվ անվանումը։

4. 2-րդ պունակում առանձին տողով լրացվում են տեղեկություններ յուրաքանչյուր տան (շինության), իսկ բազմաբնակարան շենքերում՝ առանձին տողով յուրաքանչյուր բնակարանի վերաբերյալ տեղեկությունները, որտեղ հաշվեգրված է թեկուզ մեկ մարդ։

5. Բնակավայրերի, տների (շինությունների), բնակարանների գրառումը կատարվում է նույն հերթականությամբ՝ ինչպես դրանք գրված են հաշվարարի հուշատետրի 2-րդ աղյուսակում։ Որպեսզի այդ կարգը չխախտվի, նպատակահարմար է ամփոփ տեղեկագրի 1-ին և 2-րդ պունակները լրացնել նախօրոք՝ մինչև մարդահամարի սկսվելը։

6. 3-րդ պունակում գրառվում են մարդահամարի լրացրած հարցաթերթ(եր)ի համար(ներ)ը, իսկ 4-րդ պունակում՝ կազմված մարդահամարի հարցաթերթ(եր)ի քանակ(ներ)ը։

7. Ամփոփ տեղեկագրի 3-13 պունակները լրացվում են մարդահամարի ժամանակ։ Յուրաքանչյուր օր հաշվարարը պարտավոր է այդ պունակներում գրառել այն տների (շինությունների) արդյունքները, որտեղ մարդահամարն արդեն անցկացվել է։

8. 5-7-րդ պունակներում ցույց է տրվում մարդահամարի հարցաթերթերում հաշվեգրված բնակչության ընդհանուր թվաքանակը, իսկ 8-13-րդ պունակներում այդ թվում առանձնացվում են **ժամանակավոր ներկաներն ու բացակայողները**։

9. Ամփոփ տեղեկագրում գրառելով յուրաքանչյուր բնակավայրի տների (շինությունների), բնակարանների վերաբերյալ պահանջվող տվյալները և համոզվելով, որ ոչ մի տուն (շինություն), բնակարան բաց չի թողնված՝ հաշվարարը հաշվում և գրում է 4-13-րդ պունակներում հանրագումարները՝ ըստ յուրաքանչյուր բնակավայրի։

Եթե հաշվային տեղամասի մեջ ներառված են մի քանի գյուղեր, ապա հաշվարարը սկզբում հաշվարկում և գրանցում է մի գյուղի վերաբերյալ տվյալների հանրագումարները, այնուհետև՝ մյուսի և այսպես շարունակ։ Բոլոր բնակավայրերի վերաբերյալ տվյալները ամփոփ տեղեկագրում գրառելուց հետո, հաշվարարը հաշվում է 4-13-րդ պունակների հանրագումարներն ամբողջությամբ՝ ըստ հաշվային տեղամասի, և գրառում դրանք «Հաշվառված է հաշվարարի կողմից- ընդամենն ըստ հաշվային տեղամասի» տողում, ստուգում է հաշվարկների ճշգրտությունը (**7-րդ** պունակի տվյալները պետք է հավասար լինեն **5-րդ** և **6-րդ** պունակների տվյալների գումարին, **10-րդ** պունակի տվյալները՝ **8-րդ** և **9-րդ** պունակների տվյալների գումարին, **13-րդ** պունակի տվյալները՝ **11-րդ** և **12-րդ** պունակների տվյալների գումարին), գրառում է ամփոփ տեղեկագրի լրացման ամսաթիվը և ստորագրում է այն։

10. Եթե ամփոփ տեղեկագիրը լրացվում է մի քանի թերթով, ապա հաշվարարը հաշվարկում և լրացնում է ամփոփ տեղեկագրի հանրագումարներն ըստ յուրաքանչյուր էջի՝ «Հաշվառված է հաշվարարի կողմից-ընդամենն ըստ էջի» տողում, իսկ ամփոփ տեղեկագրի վերջին թերթի վրա լրացնում նաև հաշվային տեղամասի հանրագումարը, որը ստացվում է առանձին էջերի հանրագումարները գումարելով։

11. Ամփոփ տեղեկագիրը լրացնելուց և հաշվային տեղամասի հանրագումարները հաշվելուց հետո, հաշվարարը տեղեկագրի առաջին էջի վրա գրառում է կազմված հսկիչ թերթերի, վերահսկիչ փաստաթղթերի, ուղեկցող թերթերի և մարդահամարն անցնելու մասին բնակչությանը տրված տեղեկանքների քանակը։

12. Մարդահամարի ամբողջ ժամանակահատվածում հրահանգիչ-հսկիչը մանրագինն հետևում է ամփոփ տեղեկագրի ճիշտ լրացմանը՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր շինությունում հաշվեգրված անձանց թվաքանակի, հատկապես **ժամանակավոր ներկանների** և **բացակայողների** հաշվաումանը։

13. Մարդահամարի ավարտից հետո (մինչև վերահսկիչ շրջագայություն սկսելը), հրահանգիչ-հսկիչը՝ մարդահամարի նյութերը հաշվարարներից ընդունելու ժամանակ, համեմատում է ամփոփ տեղեկագրում գրառված բնակչության թվաքանակը մարդահամարի հարցաթերթերի տվյալների հետ, ստուգում է հանրագումարների ճշգրտությունը և ուղղում թվաբանական սխալները։

14. Վերահսկիչ շրջագայության ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով վերահսկիչ շրջագայության ժամանակ մարդահամարի հարցաթերթերում կատարված բոլոր փոփոխությունները, ուղղումներ է մտցնում ամփոփ տեղեկագրի **4-13-րդ** պունակներում ըստ յուրաքանչյուր շինության, որտեղ փոփոխություն է կատարվել՝ սխալ լրացված թվի վրա գիծ քաշելով և ճիշտը գրելով։ Համապատասխան ուղղումներ է մտցվում նաև բնակավայրերի վերաբերյալ տվյալների հանրագումարներում։

«Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հանրագումարները չեն ուղղվում։

15. Հրահանգիչ-հսկիչը, հաշվի առնելով կատարված ուղղումները, հաշվում է հանրագումարներն ըստ յուրաքանչյուր էջի և ամբողջությամբ ըստ հաշվային տեղամասի և գրառում է դրանք «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» համապատասխան տողերում։ Այդ տողերում ուղղումներ չլինելու դեպքում կրկնվում են «Հաշվառված է հաշվարարի կողմից» տողերում հաշվարարի կողմից կատարված գրառումները։

16. Եթե հրահանգիչ-հսկիչը վերահսկիչ շրջագայության ժամանակ հայտնաբերի, որ հաշվարարը մարդահամարի ժամանակ բաց է թողել որևէ տուն (շինություն), բնակարան, ապա նա բաց թողնված բնակարանի վերաբերյալ տվյալները պետք է լրացնի ամփոփ տեղեկագրի համապատասխան փոփոխություններ է կատարում ամփոփ տեղեկագրի առաջին էջում։

17. Եթե վերահսկիչ շրջագայության ժամանակ հրահանգիչ-հսկիչը լրացնում է հսկիչ թերթ, վերահսկիչ փաստաթուղթ և տալիս է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին, ապա նա համապատասխան փոփոխություններ է կատարում ամփոփ տեղեկագրի առաջին էջում։

18. «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» բաժինը՝ ամփոփ տեղեկագրի առաջին էջում, լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից՝ վերահսկիչ շրջագայության ավարտից հետո, հրահանգիչ-հսկիչի հուշատետրի 2-րդ աղյուսակի տվյալների հիման վրա, որտեղ նշված են այն բոլոր դեպքերը, երբ մարդահամարի հարցաթերթերում բաց են թողնված կամ սխալմամբ գրառված են անձինք։

Մարդահամարի հարցաթերթերում գրառված բնակչության ընդհանուր թվաքանակի տվյալները՝ 7-րդ պունակի հանրագումարը «Ընդամենը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» ընդամենն ըստ հաշվային տեղամասի տողում պետք է հավասար լինի 7-րդ պունակի «Հաշվառված է հաշվարարի կողմից ընդամենը ըստ հաշվային տեղամասի» տողի տվյալներին գումարած ամփոփ տեղեկագրի առաջին էջում լրացված «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» բաժնի 1-ին պունակի և հասած 4-րդ պունակի տվյալները։

19. Վերահսկիչ շրջագայության ավարտից հետո հրահանգիչ-հսկիչը գրառում է վերահսկիչ շրջագայության ամսաթիվը և ստորագրում է ամփոփ տեղեկագիրը։

Եթե ամփոփ տեղեկագիրը կազմված է մի քանի թերթից, ապա ստորագրությունը և ամսաթիվը դրվում է միայն վերջին թերթի վրա։

